

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՏԱԼԻԱՅԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախաբան

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Իտալիայի
Հանրապետության Կառավարությունը (այսուհետ՝ համատեղ Կողմեր և
յուրաքանչյուրն առանձին՝ Կողմ),

ԻՐԱՋԵՎ ԼԻՆԵԼՈՎ այն բացասական հետևանքների մասին, որ
հանցավորությունը թողնում է հասարակական կարգի և անվտանգության, ինչպես
նաև իրենց քաղաքացիների բարեկեցության վրա,

ԳԻՏԱԿՑԵԼՈՎ հանցավորության և ահաբեկչության դեմ պայքարի բնագավառում
ոստիկանության մարմինների միջև միջազգային համագործակցությունն
ամրապնդելու անհրաժեշտությունը,

ՎԿԱՅԱԿՈՉԵԼՈՎ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի՝ 1990 թ. դեկտեմբերի 14-ով
թվագրված թիվ 45/123 բանաձևը՝ Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի
բնագավառում միջազգային համագործակցության մասին, ինչպես նաև ՄԱԿ-ի կողմից
ընդունված՝ Թմրամիջոցների և հոգեմերգործուն նյութերի մասին կոնվենցիաները,
Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան և դրա լրացուցիչ
Արձանագրությունները՝ Ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական
տեղափոխման, Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների թրաֆիկինգի դեմ
պայքարի մասին, որոնք ստորագրվել են Պալերմոյում 2000 թ. դեկտեմբերի 14-ին
Հայաստանի Հանրապետության կողմից և 2000 թ. դեկտեմբերի 12-ին Իտալիայի
Հանրապետության կողմից, ինչպես նաև ՄԱԿ-ի հովանու ներքո՝ ՄԱԿ-ի
Անվտանգության խորհրդի կողմից ընդունված՝ ահաբեկչության դեմ պայքարի մասին
բանաձևերը և կոնվենցիաները,

ՀԱՐԳԵԼՈՎ պետությունների հավասարության և ինքնիշխանության սկզբունքը և
ցանկանալով հետագայում ամրապնդել երկու երկրների միջև առկա բարեկամական
հարաբերությունները,

ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ հետևյալի մասին:

Հոդված 1

Իրավասու մարմիններ

1) Սույն Համաձայնագրի իրականացման համար պատասխանատու իրավասու
մարմինները պետք է լինեն՝

ա) Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից՝ Հայաստանի
Հանրապետության ոստիկանությունը:

բ) Իտալիայի Հանրապետության Կառավարության կողմից՝ ներքին գործերի
նախարարության հասարակական անվտանգության վարչությունը,

2) Կողմերը պետք է համագործակցեն սույն Համաձայնագրի դրույթներին

համապատասխան՝ գործելով իրենց իրավասությունների շրջանակներում, իրենց միջազգային պարտավորություններին և իրենց երկրներում գործող ներքին օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 2

Համագործակցության ոլորտները

1) Կողմերը իրենց հնարավորությունների սահմաններում կհամագործակցեն հանցավորության կանխարգելման, պայքարի և հետաքննության ոլորտներում՝ ընդգրկելով, բայց չսահմանափակելով հետևյալ ոլորտները.

- ա) անդրազգային կազմակերպված հանցավորություն,
- բ) թմրամիջոցների, հոգեմերգործուն նյութերի և դրանց բաղադրիչների ապօրինի արտադրություն, թրաֆիկինգ և մաքսանենգություն,
- գ) մարդկանց թրաֆիկինգ և միգրանտների ապօրինի տեղափոխում,
- դ) հրազենի, ռազմամթերքի, պայթուցիկ, միջուկային, ռադիոակտիվ և թունավոր նյութերի ապօրինի շրջանառություն:

2) Բացի այդ՝ Կողմերը կհամագործակցեն ահաբեկչական գործողությունների կանխարգելման և դրանց կասեցման գործում՝ իրենց երկրներում գործող ներքին օրենսդրության և իրենց միջազգային պարտավորությունների համաձայն, ներառյալ համապատասխան միջազգային կոնվենցիաները և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերը:

Հոդված 3

Համագործակցության եղանակը

Սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածի դրույթները կիրառելու նպատակով և իրենց երկրներում գործող ներքին օրենսդրության համաձայն՝ Կողմերը պետք է համագործակցեն հետևյալ ձևերով.

- ա) հանցավորության, հանցագործների, հանցավոր կազմակերպությունների, դրանց գործելաձևերի, կառուցվածքի և կապերի վերաբերյալ այնպիսի տեղեկությունների փոխանակում, որոնք երկու Կողմերի համար հետաքրքրություն են ներկայացնում,
- բ) իրենց համապատասխան տարածքներում գործող ահաբեկչական խմբերի, դրանց հետ և դրանց համապատասխան գործունեության հետ կապված անձանց մասին տեղեկությունների փոխանակում,
- գ) հանցավորության դեմ պայքարի համար օրենսդրական և գիտական միջոցների մասին տեղեկությունների փոխանակում, ներառյալ հանցավոր սպառնալիքների վերլուծության վերաբերյալ տեղեկությունները,
- դ) ոստիկանության պաշտոնյաների ուսուցման և հանցավորության դեմ պայքարի հատուկ տեխնիկաների կիրառման վերաբերյալ տեղեկությունների փոխանակում՝ փորձագետների փոխանակում կազմակերպելու և համատեղ ուսումնական գործունեություն ծավալելու հնարավորությամբ,
- ե) թմրամիջոցների, հոգեմերգործուն նյութերի և դրանց բաղադրիչների

վերաբերյալ տեղեկությունների փոխանակում և վերլուծություն,

զ) հատուկ հետախուզական միջոցառումները համակարգելու նպատակով անհրաժեշտ այնպիսի միջոցների ձեռնարկում, ինչպիսիք են վերահսկվող առաքումները, հսկողությունը և գաղտնի օպերատիվ գործողությունները,

է) մարդկանց թրաֆիկինգի և միգրանտների ապօրինի տեղափոխման դեմ պայքարում կիրառվող մեթոդների վերաբերյալ տեղեկությունների փոխանակում,

ը) անձնագրերի և այլ ճամփորդական փաստաթղթերի, մուտքի արտոնագրերի, մուտքի և ելքի կնիքների վերաբերյալ տեղեկությունների փոխանակում՝ կեղծ փաստաթղթեր հայտնաբերելու նպատակով,

թ) մյուս պետության տարածքում ներգաղթի համապատասխան կանոնների խախտմամբ գտնվող իրենց քաղաքացիների հայտնաբերում և հետ ընդունում: Սույն դրույթը լավագույն կերպով իրականացնելու նպատակով օպերատիվ ընթացակարգերը կսահմանվեն իրականացման մասին արձանագրության մեջ:

ժ) 4-րդ հոդվածում նշված աջակցության դիմումների բավարարում,

Ճ) այնպիսի այլ տեղեկությունների փոխանակում, որոնք, իրավասու մարմիններից մեկի կարծիքով, որևէ հետաքրքրություն կարող են ներկայացնել մյուս Կողմի իրավասու մարմնի համար:

Հոդված 4

Աջակցության դիմումներ

1) Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունը կիրականացվի շահագրգիռ իրավասու մարմնից աջակցության դիմումի հիման վրա կամ այն իրավասու մարմնի նախաձեռնությամբ, որը գտնում է, որ նման աջակցությունը կհետաքրքրի մյուս իրավասու մարմնին:

2) Աջակցության դիմումները պետք է լինեն գրավոր: Հրատապ դեպքերում դիմումները կարող են լինել բանավոր, բայց պետք է հաստատվեն գրավոր յոթ (7) օրվա ընթացքում:

3) Աջակցության դիմումները պետք է պարունակեն.

ա) Կողմի այն գործակալության անվանումը, որը դիմում է աջակցության համար, և այն Կողմի գործակալության անվանումը, որին ներկայացվում է աջակցության դիմումը,

բ) գործի մանրամասները,

գ) դիմումի նպատակը և այն ներկայացնելու հիմքերը,

դ) հայցվող աջակցության նկարագրությունը,

ե) ցանկացած այլ տեղեկություն, որը կարող է նպաստել դիմումի արդյունավետ բավարարմանը:

4) Համագործակցությունը կարող է իրականացվել նաև Ինտերպոլի սովորական ուղիներով:

Հոդված 5

Աջակցությունը մերժելը

1) Սույն Համաձայնագրում սահմանված աջակցությունը կարող է ամբողջովին կամ մասնակիորեն մերժվել, եթե հայցվող իրավասու մարմինը գտնում է, որ դիմումի բավարարումը կարող է վնաս հասցնել իր պետության ինքնիշխանությանը, անվտանգությանը, հասարակական կարգին կամ էական շահերին կամ հակասում է իր երկրում գործող ներքին օրենսդրությանը կամ իր միջազգային պարտավորություններին:

2) Աջակցությունը կարող է մերժվել նաև, եթե դիմումի բավարարումը գերծանրաբեռնվածություն է ենթադրում հայցվող իրավասու մարմնի ռեսուրսների նկատմամբ:

3) Հնարավորության դեպքում հայցվող իրավասու մարմինը, նախքան սույն Համաձայնագրի համաձայն հայցվող աջակցությունը մերժելու մասին որոշում կայացնելը, պետք է խորհրդակցի հայցող իրավասու մարմնի հետ՝ պարզելու համար, թե արդյոք հնարավոր է աջակցությունը տրամադրել այն պայմաններով, որոնք կարող է սահմանել հայցվող իրավասու մարմինը: Եթե հայցող իրավասու մարմինը համաձայնում է ստանալ աջակցությունն առաջադրված պայմաններով, ապա նա պետք է բավարարի այդ պայմանները:

4) Հայցող իրավասու մարմինը գրավոր պետք է ծանուցվի դիմումի՝ ամբողջովին կամ մասնակի մերժման մասին, և նրան պետք է տրամադրվի մերժման պատճառների բացատրությունը:

Հոդված 6

Դիմումների բավարարումը

1) Հայցվող իրավասու մարմինը պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները դիմումների արագ և լիարժեք բավարարումն ապահովելու համար:

2) Հայցող իրավասու մարմնին պետք է անմիջապես ծանուցել դիմումի բավարարմանը խոչընդոտող կամ այն էապես հետաձգող ցանկացած հանգամանքի մասին:

3) Եթե դիմումի բավարարումը հայցվող իրավասու մարմնի իրավասությունների շրջանակում չէ, ապա նա պետք է այդ մասին անմիջապես ծանուցի հայցող իրավասու մարմնին:

4) Հայցվող իրավասու մարմինը կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ, որոնք նա անհրաժեշտ է համարում դիմումը պատշաճ կերպով բավարարելու համար:

5) Հայցվող իրավասու մարմինը, իր հարմարությունից ելնելով, հնարավորինս արագ պետք է տեղեկացնի հայցող իրավասու մարմնին դիմումի արդյունքների մասին:

Հոդված 7

Տեղեկությունների և փաստաթղթերի օգտագործմանն առնչվող սահմանափակումներ

1) Կողմերը համաձայնում են, որ սույն Համաձայնագրի շրջանակներում փոխանցված տեղեկությունները և անձնական տվյալները պետք է օգտագործվեն

միայն սույն Համաձայնագրով նախատեսված նպատակների համար և համապատասխան են մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային կոնվենցիաներում պարունակվող դրույթներին:

2) Կողմերի միջև փոխանակվող անձնական տվյալները և մասնավորապես անձնական կյանքին վերաբերող տեղեկությունները, Կողմերի՝ տվյալների և տեղեկությունների մասին ներքին օրենսդրության համաձայն, պետք է պաշտպանվեն՝ ազգային տվյալների նկատմամբ կիրառվող նույն չափանիշներին համապատասխան:

3) Երկու Կողմերը պետք է ապահովեն, որ սույն Համաձայնագրի համաձայն փոխանցված անձնական տվյալների պաշտպանության մակարդակը համապատասխանի մյուս Կողմի ապահովված՝ տվյալների պաշտպանության մակարդակին, և որ անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և կազմակերպչական միջոցառումներ կիրառվեն անձնական տվյալները պատահական կամ անօրինական ոչնչացումից, պատահական կորստից կամ չարտոնված հրապարակումից, փոփոխումից, մուտք գործելուց կամ մշակման ցանկացած չարտոնված ձևերից պաշտպանելու նպատակով: Կողմերը մասնավորապես պետք է ողջամտորեն միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու այդ տվյալների հասանելիությունը միայն այն անձանց համար, որոնք լիազորված են անձնական տվյալներ մուտք գործելու համար:

4) Սույն Համաձայնագրի համաձայն իրավասու մարմնից ստացված տեղեկատվությունն ու փաստաթղթերը չպետք է բացահայտվեն մեկ այլ սուբյեկտի, Պետության կամ միջազգային կազմակերպությունների համար, բացառությամբ՝ տրամադրող իրավասու մարմնի նախնական գրավոր համաձայնությամբ:

5) Տրամադրող Կողմի խնդրանքով՝ ստացող Կողմը, իր ազգային օրենսդրության համաձայն, պարտավոր է ուղղել, արգելափակել կամ ոչնչացնել սույն Համաձայնագրի համաձայն ստացված տվյալները, եթե դրանք սխալ են կամ թերի, կամ եթե դրանց հավաքումը կամ հետագա մշակումը հակասում է սույն Համաձայնագրին կամ տրամադրող Կողմի նկատմամբ կիրառվող կանոններին:

6) Եթե Կողմը տեղեկանում է, որ մյուս Կողմից սույն Համաձայնագրի համաձայն ստացված տվյալները թերի են, նա պետք է ձեռնարկի բոլոր համապատասխան միջոցները՝ նման տվյալների սխալ մեկնաբանումից իրեն ապահովագրելու համար, ինչը մասնավորապես պետք է ներառի այդ տվյալների լրամշակումը, ոչնչացումը կամ ուղղումը:

7) Յուրաքանչյուր Կողմ պետք է ծանուցի մյուս Կողմին, եթե նա տեղեկանում է, որ նյութական տվյալները, որոնք նա փոխանցել է մյուս Կողմին կամ ստացել է մյուս Կողմից սույն Համաձայնագրի ներքո, թերի են կամ անվստահելի կամ լուրջ կասկած են առաջացնում:

Հոդված 8

Հանդիպումներ և խորհրդակցություններ

1) Սույն Համաձայնագրի իրականացումը դյուրացնելու նպատակով իրավասու մարմինների ներկայացուցիչները կարող են անհրաժեշտության դեպքում անցկացնել երկկողմ հանդիպումներ և խորհրդակցություններ՝ սույն Համաձայնագրի պայմանների

համաձայն գրանցված առաջընթացը գնահատելու, ինչպես նաև համագործակցությունը քննարկելու և բարելավելու նպատակով:

2) Հանդիպումները տեղի կունենան կամ Իտալիայում, կամ Հայաստանում:

Հոդված 9

Ծախսեր

1) Սույն Համաձայնագրի պայմանների համաձայն՝ դիմումների մշակման ընթացքում կատարված սովորական ծախսերը պետք է կրի հայցվող Կողմը, եթե այլ բան գրավոր համաձայնեցված չէ: Եթե դիմումը ներառում է մեծ կամ միանվագ ծախսեր, Կողմերը պետք է խորհրդակցեն միմյանց հետ՝ որոշելու համար այն ժամկետները և պայմանները, որոնց համաձայն պետք է մշակվի դիմումը, և ծախսերի կատարման եղանակները:

2) Եթե այլ բան համաձայնեցված չէ, հանդիպումների և կացության ծախսերը պետք է կրի հյուր ընդունող Կողմը, իսկ պատվիրակության ճանապարհածախսերը՝ ուղարկող Կողմը:

Հոդված 10

Լեզուն

Իրավասու մարմինները սույն Համաձայնագրի շրջանակներում իրենց համագործակցության ընթացքում պետք է որպես հաղորդակցության միջոց օգտագործեն անգլերենը:

Հոդված 11

Վեճերի լուծումը

Սույն Համաձայնագրի մեկնաբանությունից կամ իրագործումից ծագող ցանկացած վեճ պետք է լուծվի բարեկամաբար՝ դիվանագիտական ուղիներով խորհրդակցություններ և բանակցություններ վարելու միջոցով:

Հոդված 12

Ուժի մեջ մտնելը, դադարեցնելը և փոփոխելը

1) Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի այն օրվանից, երբ Կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց գրավոր կժանուցեն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական իրավական ընթացակարգերը կատարելու մասին: Ուժի մեջ մտնելու օր կհանդիսանա վերջին ծանուցման ամսաթիվը:

2) Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմնա մինչև դադարեցվի Կողմերից մեկի կողմից՝ վեց (6) ամիս առաջ դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցելով մյուս

Կողմին սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

3) Կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են սույն Համաձայնագրում կատարել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն առանձին Արձանագրություններում: Արձանագրություններն ուժի մեջ կմտնեն սույնով սահմանված ընթացակարգերի համաձայն և կհանդիսանան սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

Ի ՎԿԱՅՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, լինելով իրենց համապատասխան կառավարությունների կողմից պատշաճ կերպով լիազորված, ստորագրեցին և կնքեցին սույն Համաձայնագիրը երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, իտալերեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Հայերեն և իտալերեն տեքստերի մեկնաբանությունների միջև տարբերություններ լինելու դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

ԿԱՏԱՐՎԱԾ Է Հռոմ քաղաքում 2010թ. ապրիլի 23-ին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2010թ. հոկտեմբերի 25-ին: